

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعہ علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ՐՈՒՍ.

Գ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 55

1899 ԱՊՐԻԼ 10

Ամեն տողի համար Տարեկան կանխիկ 50 դահեկան, Վեցամսեայ 26, իսկ եռամսեայ, 13 դահեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 ֆրանկ: Թղթասարի ծախքը եմբագրութեան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի 100 զրուցի տեղ 105 զրուց:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Գրաւոր Արտ. — Պարտեզ:

Միհրան Ուրբեան. — Քաղաքապետութեան պահապան մեր մէջ:

Գ. Շահինեան. — Անդրադարձում մը:

Յ. Սինանեան. — Երկրագործական թիւերնեւրու հիւանդութիւն մը: Արմատանեք:

Ղ. Բալա. — Ճարտարարուեստական. ներկարարութիւն:

Ղ. Բալա. — Քիմիական պարարտներ:

Թերթոն. Ուղեւորութիւն երկրի կեդրոնը:

Թղթակցութիւն, Ազգ. եււոյն:

Հատը 40 փարայ

Տղապար. Գ. ԳԱՅՍԷՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ-Ալի ճատտէսի, թիւ 44

“ՀԱՆՐԱԳԻՏԱԿ,,Ի Բ. ԾՐՋԱՆԸ

Ամբողջ հաւաքածոն՝ թիւ 1էն թիւ 52, կը ծախուի մէկ օսմ. ոսկի. իսկ իւրաքանչիւր անջատ թերթ 5 դահեկան:

Հանրագիտակի Բ. Տարեշրջանի մէջ կարդ մը անձնաւորութեանց թերթ ղըրկած ենք, իրենց բաժնեգիւնը վճարած չըլլալնուն համար, ժամանակ մը վերջը դադրեցուցած ենք թերթերու առաքումը: Արդ՝ կը խնդրուի մեր Պատ. Գործակալներէն, որ բարեհաճին իրենց շրջանակին մէջ գտնուած այդպիսի անձնաւորութիւններէ ետ պահանջել թերթերը, և մեզ վերադարձնել:

Անոնք որ՝ հակառակ մեր ազդարարութեան, կամ թերթերը ետ տալ չուզ են և կամ փոխարժէքը չի վճարեն, հետզհետէ իրենց անունը պիտի հրատարակենք հոս:

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ԾԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ

փրկարար և հրաշագործ Ս. Յարութեան Ամաղարձին առթիւ, բոլոր համակիրներու կողմէ առ Հանրագիտակ ուղղուած Զատուկան շնորհաւորութիւնները՝ նոյն սրտագին խանդավառութեամբ և մենք կը փոխադարձենք, և այս առթիւ Հանրագիտակ իր շնորհաւորումները կը մատուցանէ բոլոր «Յարութիւն»ներուն:

Պարտիզակ. — Վահան Զիլուհի. — Հաճեցէ՛ք, իբրեւ ծանօթ ուղղամիտ և անխարդախ մարդ, Հանրագիտակի ձեր գործակալութեան օրով ունեցած հաշիւնիդ ԱՆՄԻՋԱԿԱՆ կերպով մաքրել, և այդ առթիւ ձեր ունեցած պարտքը ամբողջովին յանձնել՝ կամ Ս. Մակարեան էֆ.ի կամ Երուանդ էֆ. փառագեանի և կամ Ս. Մ. Գառապեան էֆ.ի չե մի փորձէք այլևս որ աւելի տհաճոյ միջոցներու դիմենք. կը բաւէ՛, այնպէս չէ՞:

Մանխա. — Գ. Կ. Ունճեան էֆ. — Շնորհակալութեամբ ստացած ենք ձեր համակրալիր նամակը և պարունակութիւնը:

Խօսուհի. — Շնորհակալութիւն. նոր բաժանորդները արձանագրեցինք. յօդուած կըր-

նաք ղրկել:

Իզմիր — Գարաթաշ. — Արտաշէս էֆ. Օհանեան. — Լաւ, ազնիւ բարեկամ. միայն թէ դուք հաճեցէ՛ք առաջին թղթատարով վճարումը ընել դրոշմաթուղթով (նամակը ապահովագրեալ)՝ ուղղակի մեր հասցէին:

Պարտիզակ. — Ս. Մակարեան էֆ. — Հոս վճարում եղած չէ՛ մեզ. կրնաք մեր նորընտիր գործակալին վճարել ամենայն ապահովութեամբ՝ բայց ո՛չ նախորդին:

Մարտիկա. — Յ. Կիւմիւշեան էֆ. — Շնորհակալութիւն ձեր շնորհաւորութեանց. պէտք եղած պատասխանը կը տրուի հաճութեամբ:

Բազմավէպ. — Մասնաւոր նամակ ղրկեցինք:

Պոլսոյ նշանաւոր թաղերէն միոյն, Կէտիկ Փաշաի բազմաթիւ Հայ ծնողքներ Խմբագրութեան յղած են հանրային կրթութեան տեսակէտով կարեւոր նամակներ, որով երախտագիտութիւն ու շնորհակալութիւն կ'այայտեն ի Կէտիկ-Փաշա Կարկուռ էֆէնտիի հոյակապ բնակարանը ղարոցի վերածելով Հայոց զաւակները անշահախնդիր կերպով բարեկրթող Ամերիկուհի Ծօնս Հանճարեղ ու Համեստաւիայլ Տնօրինուհւոյն նկատմամբ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعہ علوم

ԽՐԱԳՐԱԳԵՏ - ՏԵՕՐԷՆ

Հ. ՌՈՒԱՏ

Գ. ՇՐՋԱՆ

ԹԻ 55

1899 ԱՊՐԻԼ 10

ՊԱՐՏԷԶ

(ՈՉ ՏՈՒՆ ԱՌԱՆՑ ՊԱՐՏԷԶԻ)

Աստուած, առաջին մարդը զբախտին մէջ գնելով, անոր սերունդին՝ այսինքն՝ ընդհանուր մարդկութեան անշուշտ բան մը խնայուցուց։ Ի՞նչ բան. — Թէ մանուկն՝ ինչպէս որ դառնուիլը՝ խտտի, կանանչի պէտք ունի, նմանապէս կանանչի պէտք ունի մանուկը մեծցած՝ մարդ եղած, ինչպէս որ դառնուիլը մեծցած՝ ոչխար եղած։ Համարէն որոշածք՝ այս՝ կանանչի պէտք ունին. ու մարդն եւս առաւել։

Քաղաքները կանգնուելէն, քաղաքակրթութիւնն յառաջանալէն առաջ, մարդիկ կամայակամայ խռովուելէն։ Քանի՜ քարերն իրարու մօտեցան, քանի՜ քաղաքները խտացան, մարդիկ Քուրդու եղան։ Ուշին դալարութեամբ, բնակարանը դալարապատ էր նախնական մարդոց. արտին եւ անտառին մէջ կ'ապրէին կամ կ'աշխատէին. լեռանց կատարներու կամ կողերու վրայ կը բնակէին ու կ'աղօթէին։ Քանի՜ յառաջացաւ մարդկութիւնը,

կանանչէն սղաղեցաւ. ու կրնայ ըստիլ թէ՛ քանի՜ կանանչէն սղաղեցաւ մարդը, իր արիւնքն ալ սղաղեցաւ։ Մարդկային սպգին կենդանութիւնն իր կանանչապաշտութեան հետ ուղիղ կը համեմատուի։ Մարդիկ աւելի կենդանաւոր ու տաքարիւն են ա՛յն երկիրներուն մէջ, ուր շատ են ազատ հողերն, արտերն ու այգիները. իսկ որքա՞ն ցուրտ ու տխուր են բնակիչներն ա՛յն երկրաց, ուր գործարաններու ծխնելոյքներն հարկոյնը կը ծածկեն կը մթնցնեն։ Մարդոց բնակարանք խաւար ու խոնաւ՝ այդ երկիրներուն մէջ. սգելից ըմպելիքներու գործածութիւնը տաւրածուած՝ ախաւեղած ու ժողովուրդն ախտացուցած. բարեպաշտութիւնը նուազած. բնատնեկան կապերը թուլցած. ծնողական ուրիշ ու որդիական հնազանդութիւնը զրեթէ մարտն ջնջուած. դատախազութիւնը՝ դրոյրոցներու թուայն յաւելման հետ պակասած. առողջապահութեան տեղ բժշկութիւնը տիրած. բժշկութիւնն ու քահանայութիւնն ալ հասարակ արուեստներ եղած, սարգապէս տպրուստի կտմ շահու միջոցներ, փոխանակ ընկերային մարմնայն ու հոգւոյն խօթութեանց բուժման՝ ամբարձն նուիրուելու եւ ընկերային բնախօսութիւնը կառավարելու։

Ցուրտ ու տխուր են՝ ըսինք՝ քաղաքաց

բնակիչք: Յուրտ են մարմնապէս, քարերու վրայ՝ քարերուն մէջտեղ ապրելով. ու բարոյապէս ալ ցրբաւ են, որովհետեւ որքան Գաւիտի Կաթողիկոսն ալ յաւանդեալ էր յորդէ, նոյնքան անձնասիրութեան կ'առաջնորդէ անզգալապէս Կաթողիկոսն: Տեսէք ոչխարներն ու գիւղացիներն ինչպէս իրարու մօտ կ'ապրին սրտով և իրարու ետեւէ կ'երթան. ընդհակառակն, մէն մի քաղաքացի՝ եթէ հնար ըլլար՝ առանձին տուն մը պիտի բնակէր և ուրոյն ուղիք մը պիտի քալէր: Գիւղացի ընտանիք մը իրականութիւն մ'է, մինչդեռ անուն մ'է այլևս՝ աւանդ՝ քաղաքացի ընտանիքը — զոր ամուսնաթողութիւնն առ յաւէտ կործանել կը սպառնայ: Տիրութեան գաղով, արդարեւ քաղաքներու մէջ տիրող ոգևորութիւնը կամ գոհալուրդութիւնը զուարթութեան երևոյթ մը կուտայ քաղաքացիներուն. բայց... Երբեք: Ճշմարտ, իրական, բնական զուարթութիւնն — որ և բարոյականն է — դալարեաց մէջ անտեսեալ աննախանձ աշխատութենէն, ընտանեկան կապերուն ամրութենէն, անկեղծ աստուածապաշտութենէն կրնայ լզխիլ. ուստի, շինական իրօք աւելի զուարթ է քան բնակչահոծ կեդրոններու մարդն, որ կանաչի երես չտեսներ, որ գետնափորներու մէջ կ'աշխատի, որ տան մէջ ճրագ վառելու հարկադրուած է ցերեկը, որ ի մի բան՝ կ'ապրի, արտէ ու արեւէ հեռու, արուեստական կեանք մը քարաբնակ երկաթավառտակ:

Քանի՜ հազար տարիներ մարդկութիւնն այս մոլորական ընթացքին հետեւեցաւ, երբ անցեալ դարուն վերջերը Ժան-ժաք Ռուսոյի բնագաղտական ու մանկավարժական խոստատարութիւնն ուր ուրեմն մարդոց աչքերը բացաւ: Դրամին ազդեցութեան վրայ կը խօսին երբեմն, և ամեն ազդեցութենէ գեր ի վեր կը համարին վայն: Կ'ըսենք որ հարստութիւն երբեք մարդկութեան վրայ ըրած է զրբի մը, Երբեք Գաւիտի Կաթողիկոսն ալ զրբին ազդեցութիւնն: Առանց անշուշտ բոլորովին մոլորամտութիւն գերծ ըլլալու, Ռուսոյի հրաշակերտ անբաղդատելի ներգործութիւն մ'ունեցաւ ու դեռ ունի ու յաւիտեան պիտի ունենայ մտոց ու հոգեոց վրայ: Մարդը կանանչը լքած էր, մայրը մանուկը կը լքանէր: Իրապէս բոլոր մարդասէրներուն ամենէն մեծն եղաւ այն «մարդ-

ատեաց»ին ազդու հրաւերին վրայ, մայրերն սկսան իրենք գիւնցել իրենց գաւառներն՝ ստանալու յանձնուած և ընտանի յարկէն հեռացուած: Իսկ մանուկն՝ ուսում առնելու համար՝ մանկապարտէզի մէջ դրուեցաւ ու պարտիզարանուհւոյ մը յանձնուեցաւ:

Ահա՛ բնապաշտական այս փրկաւէտ իմաստասիրութիւնն է՝ զոր Գաւիտի Կաթողիկոսն անուանեմ, անուանեցի ես: Բնական պատմութիւնն, որ զարգացած էր և որ բոյսերուն կեանքն ու մարդկային կենաց վրայ անոնց կենսաւէտ ազդեցութիւնը կը հաստատէր, կուգար դրական հիմ ու հաստատութիւն տալ Ռուսոյի իմաստասիրութեան: Բոյսը լոյս կ'արբենար, որպէս քաղաքացի գործաւորը գոհոյ կ'արբենայ (գէթ անարատ գինի կամ օղի ըլլա՛ր). սակայն բոյսը չը գինովնար, գինովութենէն չը գլորիւր ու չը մոլորիւր, չնչկուր ու խորհելու գործարանները չը քանդէր, չուրջը թախիժ ու սուգ ու ապականութիւն չը տփուր: Բոյսը, դալարն, երբ իրեն մօտ ապրինք, առողջութիւն կը պարգեւէ մեր մարմնոյն ու մեր հոգեւոյն: Կանաչը մեր աչքը կը պարտէ ու կ'ուժաւորէ. կանաչի վրայ նայելով մեր աչքերը կը զուարթանան ու կը զօրանան: Բոյսերն անզգալի առողջարար խոնաւութիւն մը կ'արտադրեն մեր մթնոլորտին մէջ, ուր մեր շնչառութիւնը կը դիւրանայ, ուր մեր մարմինն անշուշտ իր կերպիւ հեշտագին լոգանքի մը մէջ կը խայտայ կը կենայ: Բոյսը կը մաքրէ կը խնդրաւէ մեր շնչած օդն: Արշալոյսին գոյներն ինքը կ'իւրացնէ՝ երկրներանգ իր ծաղիկներուն գոյները տալու տոգորելու համար. այդուն ցօլն իր տերեւներուն վրայ, իր բաժակներուն ծոցը կը հանգչի կը թաքչի, ցօլացնելով հոն երկինքը՝ նախակայք և նախակուրծ ամենայն բարեաց և սքանչելեաց: Կը տեսնէք: Ընթերցողք իմ, մեր միջավայրն ողջուտեալ է յետոյ՝ բոյսն ինչպէս կը դառնայ մեզ համար անզգալապէս ուսուցիչ գեղեցկագիտութեան և աստուածագիտութեան: Կը գրաւուինք յանգագայ իր տեսքէն, իր դոյներէն, իր բուրմունքէն. տարբեր ազգի բոյսեր տարբեր ձև, տարբեր տերև, տարբեր թոյր, տարբեր բոյր ունին: Կը բարձրանան, կը բարձրանան յաւէտ դէտլ արև, դէտլ երկինք: Ու կը թուի մեզ՝ երբ խոնդապատա-

նօք իրենց նայինք՝ թէ մեզ կը ժպտին։ Եւ ահա զխորունք կու գան կը հաւատեն մեզ թէ բոյն իրօք կը զգայ, իրօք կը ժպտի, և իրեն յատուկ լեզուով՝ զոր բանաստեղծքուրիշ մահկանացուներէ աւելի կը հասկնան՝ կը խօսի մեզ։ Գերմանացի համակրելի բանաստեղծն Ուհլանտ կ'ըզեր. «Կ'ըսեն թէ ծաղկունք բարբառ ունին կը խօսին, — թէ վարդը կը մասնէ մեր սուրբ սիրոյն գողտնիքն, — և թէ գերեզմանին մէջ երբ որ հանգչինք, — Vergiss—mein—nicht կը միմիջէ միշտ ... յախտեա՛ն ... » Հողին՝ երկրին հակելով, բոյն անոր վրայ Արարչին ձեռօք ցանուած բարիքներն ու գեղեցկութիւնները մեզ կը ցուցնէ։ Երկինք բարձրանալով միշտ, երկինք նայելով, բոյսը մեր աչքն ու մեր հոգին կը խորձարացնէ կը վերացնէ դէպի հոգին տիեզերական՝ որուն աչքը հաւատացին ժողովուրդը տունը կան աստղը ճառագայթաբաժակ։

Պաշտենք, եղբարք իմ, բոյսը։ Դալարապաշտ ըլլանք, ինչ որ համոնիչ է աստուածապաշտի։ Զանաւոր սր մեր բնակարանը պարտէ՛ւ մ'ունենայ, եթէ չունի. նախ զի մեր տունն աւելի լուստ է և առողջուէտ պիտի ըլլար քան եթէ տուներու կցուած ըլլար։ Երկրորդ զի, բոյսերը մշակելով, ոռոգելով, դիտելով, ընդօրինակելով ժամանակ չենք ունենար ինքզինքնիս խաղամուրթեան, գինեմուրթեան, և այլ մուրթեանց տալու, որոնք կը միճացնեն մեր մարմինն ու մեր հոգին, և ոչ միայն մեր՝ այլ և ասպագայ մարդկութեան։ — Դալարի պաշտամունքն, ընթերցողք իմ, անհաշտ չէ քարի պաշտաման հետ։ Եւ քարի քաղաքակրթութեան դէմ խօսելու երևոյթն ունեցայ. այլ իրօք կը քարոզեն այն քաղաքակրթութիւնն, որ արտադրոյթն է գիւղական ու քաղաքական կեանքի բարեխառնութեան, քարի ու դալարի քաղաքակրթութեան։ Եւ այս՝ ճշմարիտ քաղաքակրթութիւնն է։

ԳՐԱՍԷՐ ԱՏՈՄ

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՎԱՍԸ ՄԵՐ ՄԷՋ

(ՄԵՐ ԲԱՐՔԵՐԵՆ)

Ինչ որ է ճաշակի խնդիրը մեր տեսողական կամ հոգեարտային ձգտումներուն համար՝ նոյնը և թերեւ աւելին է քաղաքավարութեան դժուարին արուեստը՝ կենցաղագիտութեան նորր օրհանջումներուն համեմատ։

Միտակ-կրթութիւնն ու դաստիարակութիւնը չեն լաւեր զմեզ քաղաքավար տնձեր շինելու. ասորիւր խուսափուկ բան մը կայ որ իրենց մեծագէտ ազդել մեր նկարագրին վրայ. փափկանկատութիւն և համեստութիւն սիրուն «Ֆուանշիզմ»ով մ'եղբայրակցած՝ թերեւ ցոլացնեն քիչ շատ՝ ոգին այդ «տարբեր բան»ին։

Ատոնք քիչ մը մեզի համար... չեն, որովհետեւ այնչափ մատչելի չեն մեզի։ Մերը ուրիշ է. մենք տակաւին շատ հեռի ենք հասկնալէ խմատը բուն, ճշմարիտ, անկեղծ քաղաքավարութեան։ Նախ՝ որովհետեւ մեր մէջ, ամենէն շատ շեշտուած է՝ մեծին ու պզտիկին միջև անհուն անջրպետ մը գոյացած տեմնելու ծիծաղելի ըմբռնումը. մեծը միշտ անտարբերութիւն մը, արհամարանք մը ունի իրմէ նուազ առանձնաշնորհային, նըուազ նպատուորութիւնն դէմ, ու պզտիկը, արժանապատուութեան զգացումով մը, դրեթէ հաւատարմութիւնն մը, զգուանք մը կը տածէ մեծին, ետաւորին հանդէպ։ Եւ այս դառն ազդեցութիւնն ծնունդ կ'առնեն բոլոր հետեւութիւնները, բոլոր մանրամասնութիւնները։ Ամէն տեղ, զրօտավայրերու, հանրային կամ մասնաւոր հանդէպներու (թատրոն, նուագահանդէս, պարահանդէս, երեկոյթեւն) ու նոյն իսկ եկեղեցիներու մէջ՝ այս տրգեղ շարժումը սահմանափակ կամ լայն գիծերով կ'արտայայտուի։

Այս ցաւալի կրողութիւնը մտքիս առջև ունենալով միշտ, դիտած եմ նաև թէ մեր Եւրոյն ամէն ատեն խստապահանջ եղած են բուն փառաւորութիւն, յարգ ու պատիւ վայելելու անիմաստ քմահաճոյքով։ Իրենց համար պզտիկը՝ անարգը, համակերպածը, տրկարն է, զուրկ՝ ամէն շահեկանութենէ։ Ա-

նոր մասին հեղինակը ու անաղիս նկատումներով խօսելը իրենց զուարճութիւններէն մին է դարձած: Եւ եթէ երբեմն սրտաշի որ, անհրաժեշտ պէտքով մը, հաճին քանի մը խօսքեր ընել ՂԵՒԻ մը հետ, իրենց եսասիրութեան ու գերադասութեան գոհացում տալու համար է միայն: (*)

Ես հոս քանի մը տողերով պիտի մէջ բերեմ, իրական պատկերներէ միշտ ներշնչուած խօսակցութեան նմուշներ, իրախտ չարժուածներ ու տխուր գիծեր ոչ միայն մեր ընկերական բարքերու այլ լայն աշխարհէն այլ, քանի որ առիթը ներկայացած է, մեր ընտանեկան կամ անհատական միջավայրերէն ալ:

Ճշգիւ չեմ յիշեր ո՞ր տարին էր, սոսի որ մը, եկեղեցի մը դուռը գտնուած զանգահատան մէջ հաւաքուած մէկ քանի անձնու խօսակցութեան ուշադիր եղայ ակամայ: Առեւտրականներ էին անոնք մոկէնքն ալ: Ներսը, եկեղեցիէ արտադրութեան աւարտման բաւական ժամանակ կար: Մէջերէն մէկը իր խօսակցին ցոյց տալով յանկարծ վաճառականի գրագիր մը. «Արար նայէ՛, ագ Ե՛րբ-Ե՛ւ ժաքէթը որո՞ւ կարել տուեր է աճապար, մենք ալ մէկ մէկ հատ չինեղ տայինք» յարեց բաւական լսելի ձայնով մը: Ուրիշ տան մը, դարձեալ եկեղեցի մը դուռը բանկայը նստող անձերէն մէկը երիտասարդ մը ցոյց տալով. «Լեւոն, չու վրայոյցէ պա՛գ» կ'ըսէր:

Շողեհաւին մէջ. — Զօջը երիտասարդի մը ուղղելով. — Սա Է՛ւր ՂԵՒԵ՛ւ աղան ո՞վ է, կը ճանչնաս:

Երիտասարդէն. — Այո, ***ին քով պաշտօնեայ է:

Եւ այսպէս միշտ, յաւիտենական: — Թողունք այդ անմահներուն եկեղեցիի, թատրոնի, շոգենաւի մէջ իրենց առանձնայատուկ տեղերը ունեցած ըլլալու միջակ գոհունակութիւնը ու անցինք քիչ մ'ալ միւսներուն:

Հոս ալ անքաղաքավարութեան, անշքը՝ ճանաչեցութեան եւ որ աւելին է՝ կոշտութեան նմուշներ կան, բայց ես սիրտի սիրեմ ընդհանուր ձեւին մէջ ձգել զանոնք, չմտնաւորելով անոնցմէ եւ ոչ մին: Ասիւրով կըրնանք համարել անոնցմէ. ձգձիւմ, ռամիկ բարքերու ցոյքն եղող այլմիայի բանականներ,

(*) Յարգելի բացառութիւններ կը գլուխը ին բարեբախտաբար:

հարկուտի մենաշնորհը վայելող կնոջական կամ օրիորդային հպարտութիւններ, բարեկեցիկ արարածներու անհանգիստ, քմածին ձիւգեր՝ դէպի մենաշնորհեալներու դուռ վերելքի մը համար եւ ասոնք բոլորը, ակնարկութիւններով, նկատումներով, նախանձով, նախապաշարով լեցուն են. բարեկեցական շարժումն ինչե՞ր տեսնեք եւ ինչե՞ր... չտեսնեք: Երեւակայեցէ՛ք կիներ եւ աղջիկներ— միջակ դատարարէն— որոնք բայ ի անբաղաքավարէն՝ տգէտի տղաւորութիւնն ալ թողուցին մեր վրայ:

* * *

Գեղեցկագիտութեան եւ հաճոյակատարութեան զիտակցութիւնը չունեցողներուն մօտ է որ աւելի կը հանդիպինք այս տխուր հանգամանքին ուր մենէ չտեսնենք անհատականութիւններ կը ներկայացնեն երբեմն, իրենց անձին արժանիքը ճշգիւ չըմբռնել է ալ. ես մեծամիտներու ծիծաղաբարձ ձիւգերուն մէջ, որոնք անձնապաշտութեան ու գրեթէ հաշիւներէ կը բղխին, փաքողութիւնն ու նախանձ կը նշմարեմ միայն:

Ի՞նչ օգուտ կրնայ ունենալ մեծին ու պղտկին, մենաշնորհեալին ու պայմանադրականին, հինին ու նորին մէջ այն տեսակ մը խուլ հակառակութիւնը որ իր դուռնապան, արտուր, տգեղ՝ բոլոր կողմերն ալ կը պատկերացնէ: Ու յետոյ, մեր ընտանիքներուն մէջ, եւ բարեկեցիկ գառուն մէջ մանաւանդ, ան ի՞նչ ցաւագին բան է տեսնել կին մը, աղջիկ մը, թէ եւ բաւական ուսեալ, բայց որոնք, անքաղաքավարութեան թարմ օրինակներ տալէ չեն զգուշանար:

Կը հասկնամ թէ քմահաճոյքները, սրամտութիւնը, բաւարարելը սիրուն են. բայց ամէնուն համար ըլլալու չափ չեն ինկած: Զենք կրնար ըմբռնել ու չենք ալ ուզեր որ նիւթամուլ մը, խոշոր, տգէտ դրական մը, կամ իր մականունն իսկ գրել չգիտցող պատուելի մը ելնէ եւ իւր սալաբարձ սրամտութիւն(?) մ'ընել ձգնել ծաղրել կարծելով երիտասարդ մը որուն միակ յանցանքը... իր արգելադրելին խնամք տոնելն է եղած: Այս նախապետական երեւոյթներուն առջեւ, մեզի, նորերուն, ուրիշ բան չի մնար ընել եթէ ոչ չղրադիլ, չհետաքրքրուիլ բնաւ հին գլուխներ:

րով ու հին սովորաբանութիւններով, որովհետեւ անհնար է արմատախիլ ընել ա՛յն բարքերը որոնք, հիւանդութիւններու պէս, ժառանգական են: Գալով մեր ընկերական, ընտանեկան յարկերուն տակ ծլող գէշ տունիւրուն, ասոնք, բարդատմամբ առաջնոյն, կրնան, յաւ սնունդներով ու առողջարար պայմաններով միայն, միխթարական կողմեր ցոյց տալ մեզ:

ՄԻՋՐԱՆ ՌԵՂՈՒՐԵԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄ ՄԸ

Տոհմային կեանքի զանազան ագեթութիւններուն, բարոյական վատթարացումներուն կամ տնտեսագիտական անկումներուն «միբրոպ»ը (գարավերջիկ բացառութեամբ) պէտք է փնտռել վարչական այն յոռի դրութեան մէջ՝ որուն ենթակայ են ընդհանրապէս ամենուրեք մեր կրթական յարկերը: Այսպիսի եզրակացութեան մը յանգելու կրնանք բացարձակ իրաւունք ունենալ, նկատի առնելով թէ դպրոցը գերազանց գերը ունեցած է և պիտի ունենայ մարդկութեան կրկնակի ճակատագրին վրայ: Ընդհանրապէս խօսելով, կը հարցնենք թէ մեր վարժարանները ի վիճակի՞ են այս բաղձացուած վերջակէտին հասնելու, — գէթ ներկայ ժամանակ՝ առանց ինքնախարութեան մատնուելու՝ այս հարցումին ժխտապէս պատասխանելու դժբախտ հարկին մէջ պիտի գտնուինք ամէնքս ալ: Եւ ինչո՞ւ այսպէս:

Առանց ծանրանալու այն բաղմագան պատճառներուն վրայ՝ ինչ. նիւթական անկարողութիւն կամ դրամական տագնապ, ժողովրդական կուսակցութիւններ, պաշտօնեաներու բարոյական տկարութիւն, միջավայրի այլևայլ աննպաստ պարագաներ ևլն. որոնց բնութեան ու

գարմանին վրայ թերեւս յաճախ խօսուած ըլլայ, մենք պիտի շեշտենք ուրիշ պատճառ մը կամ պարագայ մ'ալ որ ոչ նուազ ցաւալի ներգործութիւն մ'ունեցած է մեր կրթական հաստատութեանց ներկայ ամուլ վիճակին վրայ:

Այս պարագան կրթական մէկէ աւելի պաշտօնեաներու առանց շարունակ մէկ քանի տարիներ միեւնոյն յարկին տակ պաշտօնավարելու՝ ամէն տարի յաջորդաբար պաշտօնավայր փոխելն է: Բաղմաթիւ ուսուցիչներ անձնական փորձառութեամբ գիտեն թէ իրենց համար միշտ նոր տարի՝ նոր պաշտօնավայր եղած է ու կ'ըլլայ: Ընթերցողներէն շատեր կը ճանչնան թերեւս վարժարաններ որոնց պաշտօնեաներուն խումբը ամէն տարի փոխուած է, տեսած են թերեւս ուսուցիչներ որոնք առանց յաջորդաբար գէթ երկու տարի միեւնոյն յարկին տակ պաշտօնավարելու՝ շարունակ աշակերտ ու դպրոց փոխած են. և եթէ անոնք ձեռնհասներ են, յաճախ ստիպուած կ'ըլլան կանգնելու այն աւերակները որոնք կտակած է իրենց նախորդը, և եթէ ապիկարներ՝ չինուածը կը քանդեն կամ «վէրս ի վերայ դնեն», աւերակ աւերակի վրայ: Երբ ակնյայտի իրողութիւններ այդ վիճակին մէջ կը ներկայանան, դպրոցական հոյակապ շէնքերէ, կրթական փայլուն ծրագիրներէ, դասախօսներու համայնագէտ հմուտներէն ու գիտակից ջանքերէն արդիւնք կը յուսանք: Տոհմային դաստիարակութեան այս տխուր երեւոյթին պատճառները կրնան այլազան ըլլալ՝ յարմարեւրական ըլլալով միտնգամայն բազմաթիւ ուրիշ պատճառներու հետ և տարբերի միջավայրի, անձի ու ժամանակի համեմատ:

Երբեմն ուսուցիչներն են որ իրենց խտրական կամ կուսակցական ոգիով ժողովրդեան մէկ մասին զաւակներուն պաշտպանը և անոնց հայրերուն պաշտ-

պանեալն ու գձուձ քծնողը դառնալէ վերջ, պարագաներու փոփոխմամբ քիչ ժամանակէն իրենք ալ կը վտարուին իրենց պաշտօնէն՝ կիսաւս թողլով այն գործը, որուն ձեռնարկած էին։ Շատ անգամ Հոգաբարձութիւն անուան տակ գործող անհատներէ ոմանց կամ ամբողջին անհատական հաշիւները կամ քմահաճոյքներն են որ սզդեցիկ դեր մը կը խաղան պաշտօնեաներու այս փոփոխութեան կամ փոխանակութեան մէջ, ուրկէ իրենց իբր «ածիօ» կը մնայ միայն մասնաբի մը յագեցումը։

Վերջապէս ինչ որ ալ ըլլայ պատճառը, ուսուցիչներուն խտրական ոգին կամ հոգաբարձութեան ու թաղականութեան քմահաճ ընթացքը և կամ ուրիշ և է պարագաներ։ Եւս ստոյգ է որ վընասը իրական՝ ջանքովիչ ու մահացու է միշտ։

Զե՛ն յիշեր, սիրելի պաշտօնակիցներս ձեզմէ անոնք՝ որ գիտակից ու կարող ըլլալով իրենց պաշտօնին մէջ՝ ամէն տարի դպրոց փոխած են, ինչ աքնութիւններ կրած են իրենց տարեակիդրի վայրկեաններուն մէջ անխնամ թողուած գործի մը առջև, և ինչ ցաւ, երբ «իլլանալ ամին» ստիպուած ըլլան թողուլ իրենց մաքրած՝ յարգարած արար։ չե՛ն յիշեր նոյնպէս անոնք որ քիչ մը պակաս յարմարութիւն ունենալով դաստիարակութեան ասպարէզին՝ խրոխտ ձայնով ու ամբարհաւած ձեւերով ի լուր աշակերտաց հիմնոյատուկ քանդած ոտապարած են չէնքի մը խտրութիւն և աւրած աւերակած են այն հերկուած մաքուր հողը, զոր իր նախորդ մէկ պաշտօնակիցը գուրգուրանքով կանգնած կամ յարգարած էր և որմէ արցունքոտ աչքերով բաժնոցած։

Ըսէք, խնդրեմ, կրթական այսպիսի անկարգութիւններէ, յեղյեղուկ՝ մշտափոփոխ մէթոտներէ ինչ տեական կամ մնայուն արդիւնք կ'սպասուի, և ինքզինքը դաստիարակութեան արուեստին նուր-

րող անձ մը այդ թափառիկ՝ ամուլ գործունէութենէն ինչ հոգեկան գոհացում կրնայ յուսալ։

Երբ վերքը կը չօշափենք ու անոր խտրութեան աստիճանը կուտանք հարկ է նաև դարմանին վրայ ալ խորհիլ։ Ախտաճանաչութեան դիւրութեան համեմատութեամբ վճռական դարմանի գրգռարութիւն մը կայ անշուշտ։ Հարկ չի կայ հոշակելու թէ որչափ մարդիկ այնչափ կարծիք, հետեւաբար մեր մտածումը կամ կարծիքը միայն յառաջ պիտի բերենք։

Կեդր. Ուսումն. Խորհուրդը անկարող է իր տրամադրելի բարոյական ու նիւթական միջոցներով ազդեցութիւն ունենալ մինչև յետին դաւառն ու յետին դիւր։ Մենք գոհացած պիտի ըզգանք ինքզինքնիս, երբ ան Պալտոյ թեմը միայն խնամել դիտնայ հարկ եղածին պէս և կարենայ դիտակցութեամբ ու անաչառութեամբ բաշխել վիշակաւորներ, Հետեւաբար անկէ բան մը չեն կրնար յուսալ գաւառի դպրոցները։ Կը մնան միայն գաւառային Ուսումն. Խորհուրդները, որոնք իրենց վիճակին կրթական քոնգրէրը ընելու ամէն դիւրութիւն և յարմարութիւն ունին։ Կրնան սահմանել անոր ծրագիրը և ուսուցիչները, կրնան իրենց վիճակին մէջ դառնուող դպրոցներուն նիւթական ու բարոյական կարողութիւնները իմանալ կամ զնահատել կըրթական յատուկ տեսչի մը շնորհիւ։ Ամէն մէկ վարժարանի ունեցած պիւտճէին համեմատ յարմարագոյն պաշտօնեայները կրնան գտնել և զետեղել։ Կրնան անօրինել որ առանց իրենց դիտութեան ոչ պաշտօնեան կարենայ հեռանալ և ոչ ալ կարենան զինքը հեռացնել, ոչ անոր ամսաթոշակը բարձրացնել և ոչ ալ զեղջել։

Այս դրութեամբ իւրաքանչիւր գաւառային Ուսումն. Խորհուրդ իր վիճակին բոլոր դպրոցներուն մէջ միօրինա-

կուժիւն և կարգաւորութիւն պիտի հաստատուի և դաստառուները միանգամ ընդ միշտ պիտի ազատին կարծենք՝ ջոջ ազաններու խրոխտ և արտաքսիչ ազդեցութիւններէն ու հոգաբարձուներու քմահաճ ընթացքէն որոնց տխուր զոհերը քիչ չեն կարծեմ: Չենք ըսեր թէ իւրաքանչիւր վարժարան իր հոգաբարձութիւնը չունենայ, ո՛չ, այս չենք ըսեր (զի՞նչ մարիտ, ուղղամիտ հոգաբարձութեան մը բարերար ազդեցութիւնը ուրանալ անկարելի է), այլ չենք ալ փափաքիր որ վճռական որոշումները անոնց շրթունքներէն միայն լսուին:

Մեր կարծիքը՝ համոզուած զգացում մըն է տոհմային դաստիարակութեան մէկ տխուր երեւոյթին վրայ. գնտասեղի չարամիտ հարուածներ կամ խայթուածներ չենք գրած անոր մէջ ո՛ր և է պաշտօնէութեան դէմ, այլ կը թական զարգացման համար տաժուած հոգեկան բաղձանք մը:

Ագ—հիսար

Գ. Շահին

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

ԹԹԵՆԻՆԵՐՈՒ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆ ՄԸ

Արմատանէս (Գ. Բ. Բ. Բ.)

(Շահին Բ. Բ. Բ. 54 Բ. Բ.)

Արմիլարիտի մանրեութեամբ ծիլն ու տարածուիլը յառաջ կուգայ, վերոյիշեալ թերթիկներու կատարելութեան հասնելով թափելէն, ասոնք, իրենց յարմար միջավայրը գտնելուն ոյէս, 24 ժամէ պակաս ատեն ուն մէջ կը ծիլն ու յառաջ կը բերեն ներքնահողային արմատակերպ մը, որ թէ և նախ կրնայ իւր սարքով թափել առանց փնտ

պատճառելու, (*) սակայն արմատներու մէջ թափանցելով կրնայ ըլլալ մակարոյծ ու պատճառել մեծամեծ փնտսեր:

Արմիլարիտի պատճառով արմատներու վրայ յառաջ եկած փոփոխեան հետեւեալքը, ուշ կամ կանուխ, ծառին մահը կ'ըլլայ, երբեմն ճիւղերը կը չորնան հետզհետէ, իրարու ետեւէ, ծառը կը նիհարնայ, կը տկարանայ ու մահը յառաջ կուգայ միայն 3 կամ 4 տարիէն. այս պարագան կը նշմարուի աւելի չոր հողերու մէջ, ուր ներքնակեղեւային արմատակերպներուն աճումը կանոնաւոր կերպով տեղի չունենար. ուրիշ ատեններ ընդհակառակըն մահը խիտ արագ կ'ըլլայ: Ծառ մը որ առջի տարին բան մ'ունեցած չ'է ու գարնան ալ սովորականին նման կը բանայ իր տերեւները, յանկարծ կ'աթուածահար կ'ըլլայ: Տերեւները, դեռ չ'հասած իրենց կատարելութեան կը թառամին, կը դեղնին ու կը կախուին իրենց կոթունին վրայ, դարձեալ փափած մնալով ծառին՝ որ ալ կեանքի նշան չը տար, և այս տեղի կ'ունենայ 10 օրէն պահաւ ժամանակամիջոցի մը մէջ. այս տեսակ մահեր ընդհանրապէս խոնաւ, կակուղ ու ջուրերէ փոխադրուած հողերու մէջ տեղի կ'ունենան:

Հիանդութիւնը հողին բնագիտական յատկութեանց կազմուածքին համեմատ, յամրօրէն կամ արագօրէն կը յառաջանայ, գրեթէ միշտ կարգի մը հետեւելով ու յառաջ կը բերէ ահագին տարածութեամբ պարապութիւններ:

Ձրանայի հարաւային անտառներուն մէջ շատ կան այդպիսի վայրեր, և դարձեալ, այս սահմանի գաւառներուն մէջն է որ Արմիլարիտ պատճառ եղած է թթենիներու ամենէն ահւելի, ամենեն վտանգաւոր ու ամենէն տարածուած հիւանդութեան. գիւղացիք

(*) Արմիլարիտ մէլէն կամ ակարիգուս մէլէն կրնայ երկու տեսակ ապրիլ, մին սովորական աղբի սուսկի (ակարիգուս գամբէսի) նման մեռած նիւթերով՝ աղբիւտով, ասոնց փնտ հասցնելու ծառերուն, (միմուր ան սարքովի). և երկրորդը, կենդանի հիւանդութիւն, ապրող ծառերու արմատներուն վրայ, (միմուր ան բառագիր) և զանոնք սպաննելով:

անոր արձաններու վրայ տեսնուած միսէլի-
մին «փայլուն արծաթ» (վիժ առժան=առ-
ժան վիժ) անունը կուտան, ա՛յն փոստորա-
յին յատկութեանն համար, որ կուենայ գի-
շեր ատեն:

Առմիաբանէ տարբեր ուրիշ հիւանդու-
թիւններ, ինչպէս Ռիգօթթօնիա մօռի կամ
Րօզէլիսիա ագուիա և Տէմաթաֆօրա նէ-
քաթրիքս միւսոյն եղանակաւ կ'սպանեն թը-
թենիները. ու թէ և դժուարին չէ անոնց
ինքնութիւնը դանազանել, սակայն ցաւալին
ա՛յն է որ գիտութիւնը ցարդ չէ կրցած ազ-
դու ճար մը գտնել անոնց դէմ: Քիչ շատ
խորունկ խրամներ բանալ վարակուած ու
չվարակուած գետիներու միջև, կրնայ մե-
ծապէս օգտակար ըլլալ, արգիլելով հիւան-
դութեան յաւաքխաղացումը սպառնաճև
արմատակերպներու միջոցաւ. այս միջոց ան-
օգուտ է սակայն այնպիսի վայրերու համար,
ուր մօտրեւեքներ սպառնալով հունտեր յա-
ռաջ կուգան: Պարտէզին մէջ երկար փոսեր
բանալ՝ աւելորդ խոնաւութիւնն առնելու
համար, չորցած ծառերու արմատները չը
թողուլ հողին մէջ, և նոր ծառ չտնկել այդ
տեղերը, չմարած կիրով և կամ ուրիշ մակա-
րուծապան դեղով մը ամացնելէ առաջ,
ապագային բռնուկը կատկածելի եղող ծա-
ռերուն արմատները բանալ ու անոնց վրայ
կրափոշի ցանել, և կամ 1 առ 100 պղնձի
ծծմիստով ոռոգումներ ընել, կրնան օգտա-
կարութենէ զուրկ չըլլալ:

* * *

Հիւանդութեան վրայ այսքան ծանօթու-
թիւն տեսնալէ վերջ, եթէ ոչ՝ բացարձակ
փոտահութեամբ, գոնէ խիստ հաւանօրէն
կրնանք յայտարարել թէ Չէնկիլէրէ Փորթու-
գալեան, և Ատարագարէն Շիրինեան էֆ. նե-
րու նկարագրած հիւանդութիւնները նոյնն
են, Պարտիզակէն Փափաղեան էֆ. ի բա-
ցատրած հիւանդութեան հետ. այն առերե-
ւոյթ տարբերութիւնը, զոր կը կարծէ գլու-
նել Շիրինեան էֆ. իր ու Փափաղեան էֆ. ի
նկարագրած հիւանդութեանց միջև, կրնայ
մեկնուիլ մեր բացատրութիւններէն, զորս,
ըստ կարելոյն, հասկնալի ընելու ջանացինք:
Այն ենթադրութիւնը թէ հողին մէջ գտնու-
ող որդ մը կամ լուծ մ'ալ կրնայ թթենի-

ներու մահ սլատճառել, կրնայ հաւանական
ըլլալ. մեր Խնէկէօլէ անցած ատեն, գիւղա-
ցի մը մեզի ճերմակ որդեր բերաւ ըսելով
թէ՝ չորցած թթենիներու արմատներուն բու-
լորտիքը գտած էր: Մե՛զք որ ստիպուած է-
ինք չուտով ձգել հեռանալ, որով չկրցինք
ստուգել թէ իրօք որդն էր պատճառ, թէ
անիկա երկրորդական բան մ'էր միայն: Կը
յանձնարարենք Շիրինեան էֆ. ի ծանօթու-
թիւնը յանձն առնել, քանի մը չորցած ծա-
ռերու ներքնահողային մասերն ու բոլորտիքի
հողերն ուշադրութեամբ քննելու, եթէ պո-
տահի մեր նկարագրած պարսնոճև արմա-
տակերպներուն ու ներքնամորթային հովա-
հարածէ թերթիկներուն, այն ատեն, ինքն
ալ կրնայ փոտահ ըլլալ թէ Ատարագարի ար-
մատները տարբեր չէ Պարտիզակիէն. մենք
18 չորցած ծառերու 15ին վրայ դրանք զա-
նոնք, մնացեալները կ'երեւի թէ անուշադ-
րութեամբ հողին մէջ ձգած էինք:

Գտնով Պիլէճիկի և Վէզիր-Պանի կողմերը
գտնուած հիւանդութիւններուն, մենք չենք
կարծեր որ անոնք ջրոյ պակասութենէ յա-
ռաջ եկած ըլլան: 98ին երբ պատահութիւն
ուէեցանք այն կողմերը քննական այցելու-
թիւններ տալու իրր քննիչ այգիներու հի-
ւանդութեանց ու մասնաւորապէս «Միլիու»,
ալ գտնուած չմնաց որ չսէինք թթենիներու
հիւանդութեան մը մասին, որ ըսուածի՛ն նա-
յելով իրենց պատուհանն էր: Առիթ ունե-
ցանք մանաւանդ տեսնելու Քիւլիլի ու Լէֆ-
քէի թթաստանները, ուր հիւանդութիւնը
անօրինակ կերպով ճարտկած է, ստոյգ աղ-
բիւրնելէ տեղեկացանք թէ, միմիայն Լէֆ-
քէի գիւղախմբին մէջ տարեկան 200,000 մա-
տալ թթենիք, «միայն չորցածները փոխա-
րինելու» կը ծառայեն, թէ և այս թիւ քիչ
մը չափազանց կը թուի մեզի: Քիւլիլի ալ
անկի շատ վար չմտար: Այդ տեղերը հոն ուր
հողը Սագարտի (Լէֆքէ) և կամ Քարասուի
(Քիւլիլի) բերած աւաղներէ կազմուած է,
թթենիք շատ խիտ տնկուած են, 8—10 հատ
մէկ մեթր քառակուսիի վրայ, նիհար ու վը-
տիտ են: 4—5 տարիէն աւելի չե՛ն դիմանար
ու բուններնուն տրամագիծը 7—10 հարիւ-
րորդամէթը չանցնիր: Իրաւ է թէ անանկ
տեղեր կան, ուր, ջուրին պէտքը զգալի է,
սակայն այս ըսել չէ թէ հիւանդութիւն մը

չկայ: Բիւզնիսի տարտէզները, որք միշտ կը ջրուին, բնաւ բարեօրոյժ մը չեն ցուցներ, ու հիւանդութիւնը կը շարունակէ իր կոտորածը:

Մենք, թէև առիթ չունեցանք մասնաւոր քննութիւն մը ընելու, հիւանդութեան տեսակը որոշելու համար, սակայն բաւական պատճառներ ունինք հաւատարմութիւն, այդ տեղերու հիւանդութիւնը Ռիփօքօնիա մօտի ըստած տեսակն է, որու վրայ կը խոստանանք գրել գալ անգամ:

Ասկէ 4—5 տարի առաջ փութած թիւերու նմանքներ զրկուած էին երկրագործական նախարարութեան պաշտօնատուներ—որ տեղին ըլլալը լու մը չեմ յիշեր—, նախարարութեան գիտական ժողովը քննեց ու Ռիփօքօնիա մօտի անունը տուաւ անոր, հիւանդութիւն մը, որ իր չորցնելու եղանակաւը, շատ մօտիկ է Արմիլարիա մէլէտի:

Ինչ որ սլ եղած ըլլայ անկային հիւանդութեան տեսակը, սա իրաւ է թէ ո՛չ երկրագործական նախարարութիւնը, ո՛չ ալ Հանրային պարտուց վարչութիւնն կրցած են ցարդ ուրիշ օգտակար ու գործադրելի դարձան մը ցուցնել այն միջոցներէն զատ զորոարդէն նշանակեցինք:

Պարտիզակ

Յ. ՍԵՆԵՐ

ԲԱՄՍԱԿԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆՆ Ի ԽԱՐԲԵՐԴ

Խարբերդ գերազանցապէս գինիի ու բամպակի երկիրն եղած և իրաւամբ արժանացած է «բամպակի քաղաք» մակերիւն: Թողլով ուրիշ տաթի մը գինիի պատրաստութեան համար ի գործ դրուած միջոցներն, փորձենք բամպակի մշակութեան վրայ հակիրճ տեսութիւն մ'ընել:

Հնագոյն ժամանակներէ ի վեր կը մշակուի այս տունկը ի Խարբերդ և չրջակայքը. սա չէ այն տունկերէն որ գոգցես պարբերաբար կուգան երկրագործին ունն ու ուրուքը իր վրայ դարձնելու, գրաւելու ուրիշ բոյսերու յատկացեալ տեղերն՝ անյայտանա-

լու համար այնպէս ինչպէս եկած էին: Այսպէս եղաւ ժամանակ մը աֆիոնի և ճէհրի մշակութիւնը, որու ժամանակ, մանաւանդ առաջինը ընդարձակած աւալ գետիններ գրաւած էր և սակայն այժմ, նմոյշ մ'իսկ կարելի չէ գտնել Խարբերդու գաւառին մէջ. իսկ եթէ վերջինէն կը գտնուին (շատ հազուադիւրէն), անոնք ալ այնչափ ինկած գին մ'ունին, որ նոյնիսկ հաւաքող գործաւորուհիներու օրականն իսկ չի կրնար հաւասարակշիւել, ու հետեւաբար լուսն իսկ թուրքին վրայ կը սեւնան ու կ'ոչնչանան:

Ո՛չ թէ շահու ակնկալութիւն, այլ տեղաւոր տեղերն են որ անհրաժեշտ դարձուցած են այդ ոքանչելի բոյսին մշակութիւնը և Խարբերդի գիւղացին իրաւունք ունի, երբ հաւասարապէս կարեւորութիւն կուտայ թէ ցորենի և այլ արմատեաց հունձքին և թէ բամպակի բերքաւրին: Ասով է որ կը հագայ իր առունին պէտքերն, իր զգեստներն, որք մեծ մասամբ կուտէ կը բաղկանան, պարկեր, գլխարկներ կաղամածներ ևլն, որք հրապարակին վրայ դիւրաւ վաճառելի են: Գիւղացի կնոջ համար հանդարտիկ գրադում մ'է ձմեռուան երկարատե գիշերներն մանեղով անցընել, որպէս զի իր սյրն ալ գործէ, վասն զի գիւղացիներու գրեթէ մեծագոյն մասը իրենց տան մէջ հոր մ'ունին: Սակայն ցաւալի է ըսել թէ այս բոյս, որ ուրիշ շատ երկիրներու հարբատութեան աղբիւրն եղած է և կը շարունակէ ըլլալ, յուսացուած արդիւնքը և մշակութեան ընդարձակումը չունենար Խարբերդի մէջ: Ինչ է պատճառը այս ողբալի կացութեան: Փորձենք լուսաբանել:

Խարբերդի երկրագործ դատուն մէջ ուսումն իր տեղը չէ գրաւած, և եթէ պատահաբար մէկ քանի տարի գոհացուցիչ հունձք չտանայ, կը յուսահատուի, և կը յուսահատուցընէ զանոնք՝ որոնք մտադիր էին շարունակել այդ բոյսի մշակութիւնը, առանց երբեք հետաքրքրուելու թէ ինչ է պատճառը, և թէ ինչպէս կարելի է առաջն առնուլ. այսպէս թէ՛ իրենք զո՛հ կ'երթան և թէ՛ ուղղակի վաճառ կը պատճառեն կալուածատիրոջ ու լուսամիտ երկրագործին: Եւստիայ դրութիւնը (assolment triennal) տիրապետող դրութիւնն է, վստահապէս կրնանք ըսել թէ լուսագոյն դրութիւնն է քան երկամեան, որ

այժմ կը գործադրուի էրզրումի և չրջակայից մէջ, Եռամեայ դրութիւնն յաւելի մեծ տեղ մը կուտայ բամպակի և սարկուճուոր բոյներու մշակման, և եթէ պէտք եղած կերպով գործադրեն, այն ատեն յուսովի է թէ աւելի մեծ ծաւալում մը ստանայ:

Գժբաղդարար, արուն հանգիստ ձգելու սովորութիւնն Խարբերդի դաշտին մէջ եւս տարածուած է: սովորութիւն մը՝ ուրիշ շատ դժուարին է խախտել գիւղացին: Թէպէտ այս սովորութիւն կարծուածին չափ խոտերի չէ, բայց պայմանաւ որ շարունակ հերկուի, որպէս զի հողին մէջ գտնուած աղբն այրուելով քստակերի ըլլան: Բայ աստի դիտուած է որ արտ մը հանգիստ մնալէ վերջ աւելի ազնիւ տեսակէ բերք կ'ուտայ: և ասի է որ կորդի վրայ բուսած ցորենը աւելի ծանր՝ հետեւաբար յարգի է: Սակայն երբ կարելի է աւելի չահաբեր կերպով մշակել, այն ատեն հրաժարելու է այս հնաւանդ սովորութենէն, մանաւանդ այնպիսի տեղեր, ուր երկրագործութեան կցուած է նաեւ կենդանաբուծութիւնը: այս կերպով թէ՛ հողը շատ չտկարանար և թէ մեծ տեղ տրուած կ'ըլլայ կենդանիներու կերի յատկացեալ բոյսերու: Սակայն ոչ այս ոչ այն կը գործադրուին Խարբերդի մէջ, և գիւղացին ալ կը յամառի շարունակել այս վիճակը և սուժապն է բամպակը, որու մշակման ընդարձակումն արդէն կը լինի: Եւ եթէ ի նկատ առնուիք մշակութեան անկատար կերպը, հունտի խորթացած լինելը, մատաք ևս դիւրագին, ճանապարհներու չգոյութիւն, այն ատեն պատահականա՞ծ կ'ըլլանք այդ հարցմանց, եթէ ոչ ամբողջովին՝ գէթ ըստ մասին:

Հատուտապէս իրաւութիւն մըն է թէ Ատանա տարուէ տարի կ'աւելցնէ բամպակի արտածումը: անվիճելի է Ատանայի նպաստաւորեալ դիրքը՝ բաղդատմամբ Խարբերդի, Խակայն ի սկզբան Ատանա ևս այն վիճակին մէջ կը գտնուէր, և եթէ նախաձեռնութեան ոգին պոկսէր իրեն և շարունակէր իր հնաւանդ սովորութիւններէն չչեղիլ, այն ատեն երբեք չզրկուի գնահատուէր իր բամպակը եւրոպական հրապարակներուն վրայ և տարածուած պիտի ըլլար ընդարձակել բամպակի մշակութեան սահմաններն այնքան, որքան կը պահանջէին միայն տեղական պէտքերն:

այսպիսով զրկած պիտի ըլլար ինքզինքը միջոց մը, որ ապա, կոչուած էր կազմելու իր բարօրութեան ազգականներէն մին:

Այդպէս չըրաւ Խարբերդ, իր բամպակի հունտերն ընտիր տեսակէ չէին և երթալով գէշցած էին: ոչ մէկ երկրագործ նախաձեռնութիւն ունեցած էր լաւցնելու հունտին տեսակը, նոյն ինքն բերել տալով մօտակայ գիւղերէ, քանզի կան այնպիսի գիւղեր որոց արդիւնքն յարաբերաբար ազնիւ կ'ըլլայ, բայց նախաձեռնութենէ. չէր գտնուած մէկն, որ նախատեսելով այն կորուստն, որու կը դիմէր երկրագործ դատակարգը, ըզգուշացնէր զնա՝ մինչև որ Ամերիկայէն վերադարձող գաղթականներ անհատաբար փորձեցին մուծանել իրենց գիւղին մէջ ամերիկեան հունտեր, բայց յուսացուած արդիւնքը չստացուեցաւ: Թէպէտ մանրամասնաբար տեղեակ չենք գործողութեանց պարագաներուն, բայց կրնանք վստահօրէն ըսել թէ հարկ եղած զգուշութիւններն ի գործ դրուած չեն անոր յաջողութեան համար: արդէն անմիտ բան կ'ըլլար եթէ սպասէինք այն արդիւնքին, որ կը ստացուի իր բնիկ երկրին մէջ: Հոգն ու կլիման փոխուած ըլլալով, պէտք էր ըստ կարելոյն այնպիսի դիրքեր ընտրել, որոնք իրենց հողի և կլիմայի տեսակէտով համապատասխանեն այս երկրի հողին ու կլիմային՝ ուրիշ ներածուած են: Խարբերդ գտնուելով մօտաւորապէս այն լայնութեան աստիճաններուն տակ, որոյ տակ կը գտնուին Ամերիկայի ամենէն աւելի բամպակ արտադրող նահանգներն, նոյնպէս ջերմութեան աստիճաններու գումարն հաւասար լինելով մօտաւորապէս այն ջերմութեան գումարին, որուն պէտք ունին Ամերիկայի բամպակները իրենց հասունութեան հասնելու համար, ինքնին կը հերքուի այն կարծիքը թէ տեղը նպաստաւոր է լուսագոյն բամպակ արտադրելու համար:

Կը մնայ ուրիշ մշակութեան մէջ բարեփոխումներ մտցնել, սպասելու համար ապագային անոր արդիւնքներուն: Կը յուսանք թէ օգտաշատ Հանրապետակի պատուարժան խմբագրութիւնն պիտի ըմբռնէ ինքզինքն կարեւորութիւնը և իւր օգտակար իրաւունքով ստատար լինել շարժման մը, որ մեծ կարեւորութիւն պիտի ունենայ նմանօրինակ նա-

հանգներու համար ևս^(*)։ Ուրախութիւն մ'է մեզ համար, երբ կը տեսնենք նորանոր Զանքեր այս օգտակար բոյսի ընդարձակման համար, բացի հասարակ մեքենաներէ (տեղական ճրճը), որոնք բամպակը կուտէն զատելու կը ծառայեն և որոնք ամէն գիւղի մէջ կը գտնուին։ Կը գտնուի այժմ գործարան մը յնդեգի, որ բամպակի կուտը կը զատէ։ Ասկէ առաջ տեղական ճրճըսներով միայն կը հանուէին բամպակի կուտերը, սակայն անկատար մեքենայ մ'ըլլալով կը կտորէր կուտերը և կը ծամծմէր բամպակը։ Մինչ գործարանի արտադրածներն աւելի փայլուն կը լինին և տեղական հրապարակին վրայ աւելի կ'արժեն։

Նոյնպէս չրջակայ գաւառներն արտածումները աւելի ընդարձակելու համար նորանոր Զանքեր կը տեսնուին։ Իբր նշանակելի կը յիշենք հայազգի Գրիգոր Էֆէնտի Իփէքճեան ծանօթ իւր մետաքսեայ անկումներով, Ամերիկա և այլուր զրկած է իւր գաւառներն, հոն ուսումնասիրելու համար մանարաններու կազմութիւնն, որ ի կարգին նմանօրինակ մանարան մը հաստատեն ի խարբերդ, տեղւոյս վրայ շահագործելու համար նախնական նիւթըն։ Կը յուսանք թէ բարի օրինակ մը պիտի ըլլայ, որու հետեւողներ չպիտի պակսին։ Յաջողութիւն հայ գործարանատիրոջ այս նոր ձերնարկին։

Խորուհի Տ. Գրիգորեան

Ծ. Խ. — Արդէն պիտի գրենք բամպակի մշակութեան վրայ, բայց Խարբերդցի ազգայինները շատ ու շատ թու վարուած են թերթիս նկատմամբ, որ երկրագործական տեսակէտով, պէտք էր միւս գաւառներէ աւելի հետաքրքրուէին և քաջալերէին զմեզ։

Ա. Զ. Գ.

Յառաջիկայ շարժու, Ս. Զատիկի առթիւ, ՀԱՆՐԱԳԻՏԱԿ չի հրատարակուիր։

Այս առթիւ կրկին կը յիշեցնենք մեր Պատ. Գործակալներուն և Բաժանորդներուն որ հաճին գէթ նախորդ չրջակի պարտքերնին մաքրել։

ՃԱՐՏԱՐԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Սպիտակացում բամպակեայ մանածներու

Եւրոպայի շատ մը ներկարարներ իրենց քլորջուրի ուժը հասկնալու համար, կը գործածեն ընդհանրապէս Պոմէի անօսրաչափը (առէօմէթուր Պոմէ) կամ խտաչափ, և ուսմանք ալ աւելի ճշդութիւն դնելու համար իրենց գործողութեանց մէջ կը հետեւին քլորաչափական դրութեան, որու մէկ պարզ եզրանակը դրինք Հանրագիտակի անցեալ թըւոյն մէջ. և ստով ալ չի գոհանալով, մինչև իսկ իրենց ալքոլաջուրերը (սօտաջուր) և թըթուտաջուրերը (ջրախառն գաճեաղի, ևն.) փոխանակ կշիռով պատրաստելու, կը հետեւին ալքոլաչափական և թթուտաչափական դրութեանց. որովհետեւ՝ հրապարակը ծախուած թէ ալքալիները և թէ թթուտները, կիրի քլորակին պէս՝ միշտ միեւնոյն զօրութիւնը չեն ունենար. հետեւաբար, եթէ միշտ իրենց լուծաջուրերը կշիռով պատրաստեն, տարակոյս չի կայ որ, մերթ յաջողութիւն կը գտնեն մերթ ևս ոչ. ահա այս է այն գլխաւոր պատճառներէն մին՝ որով մեր տեղացի ներկարարները շարունակ միեւնոյն յաջողութիւնը չեն գտներ, և իրենց ապրանքները մերթ աղէկ ու մերթ ևս ստորին տեսակէ կ'ըլլան։ Քլորաչափական, ինչպէս և ալքոլաչափական և թթուտաչափական դրութեանց վրայ մասնաւոր յօդուածով մը պէտք եղած ընդարձակ բացատրութիւնը տալ խոստանալով, կ'անցնինք այժմ շարունակել սպիտակացուցման գործողութիւնները բացատրելու։ Եւ փոխանակ լուծաջուրերու պատրաստութեան մէջ մտած գոյանուտերու կշիռը տալու, պիտի բաւականանանք միայն այդ լուծաջուրերու խտութեան աստիճանը ցոյց տալով, որ ինչպէս ըսինք, աւելի հիմնական և որոշ միջոցներէն մին է։

Խտաչափը և կամ Պոմէի անօսրաչափը ա-

պակիէ չինուած երկայն խողովակի ձեով գործիքներ են, և կը նմանին տեսքով ալքու-
լաշտիկերու (օղիներու ուժը չափող և Պոլսոյ մէջ կուտօ անուանով ճանչցուած) :

Բամպակի կարծերը լուալէ վերջ պէտք է երկու ժամ մալի տակ, կիրի քլորուկի լուծա-
ջուրի մէջ թողուլ, որուն խառնութիւնը պէտք է ըլլայ, եթէ բամպակը շատ մաքուր է, —
1. եթէ աղտոտութիւնը միջին աստիճանի է՝ 1,006. իսկ եթէ շատ աղտոտ՝ 1,014: Առա-
ջին աստիճանը հաւասար է Պոմէի 0 աստի-
ճանին, երկրորդը 1ին, իսկ երրորդը 2ին :

Երկու ժամէն վերջ, ամբողջ կէտ ժամ լուալու է կրկին մալի տակ :

Թթւումացում. — Լուալու գործողութե-
նէն անմիջապէս վերջը, ընկղմել կարծերը՝
մալի տակ՝ ջրախառն ծծմբական թթւումի
մէջ. լուծոյթին խառնութիւնը պէտք է ըլլայ
1,005. Կամ Պոմէի հեղկաշափով կէսէն 1 աս-
տիճան: Գործածուած զուտ ծծմբական թթ-
ւումի ուժը պէտք է ըլլայ Պոմէի հեղկաշա-
փով 66 աստիճանի և կամ խտաշափով 1,84ի:
Ոմանք նախամեծար կը համարին միւսնոյն
չափով ջրաքլորական թթւում (թուլբուհու)
գործածել :

Թթւումացնելու գործողութեան նպա-
տակն է, թեկերուն վրայ մնացած կիրը ան-
հետացնել, որ յառաջ կուգայ կիրի քլորու-
կէն :

Այս գործողութենէն վերջը կրկին մալի
տակ կը լուան մինչև կէտ ժամ, յետոյ լուաց-
քը կ'ամբողջացնեն լուացոց (յալէօզ) կոչուած
մեքենայի մը մէջ. եթէ այս վերջի մեքենան
չունենաք, պէտք է այն ատեն լուացքը եր-
կարել, և աւելի ուժով կատարել :

Եթէ բամպակի թեկերը ճերմակ պիտի
մնան, այսինքն չը պիտի ներկուին, այն ա-
տեն կը լրջոտեն (չիվիտէ քաշել) տաք օճառ
ջուրի մէջ լեղակ լուծելով: Ուրիշ վերջը կը
քամեն և կը չորցնեն :

Եթէ մանածները կրկնոր կամ բազմոր
են, այն ատեն վերի երեք գործողութիւն-
ները՝ լուացք, քլորացում և թթւումացում,
կը կրկնեն. բայց ոչ թէ գործածուած նիւ-
թերը կրկին չափով, այլ վերը բացատրուա-
ծին պէս գործողութեան շարքը անգամ մը
լրանալէ վերջ կրկին կ'սկսին լուացքէն և կը
վերջացնեն թթւումացումով, քամելով և չոր-

ցնելով. և այս պարագային՝ լրջոտումը միայն
վերջի անգամուն կը կատարեն :

Եւրոպայի մէջ, ալքալաջով լուացքը կը
կատարուի ընդհանրապէս՝ երկաթեայ կաթնայի
կամ կարասի մէջ :

Իսկ քլորացում, թթւումացում և պարզ
լուացք կը կատարուին մաղի տակ, ինչպէս
վերը ըսինք: Ահաւասիկ թէ ինչպէս կ'ըլլայ
մաղի տակ ըսուած գործողութիւնը :

Կարասը կը շինեն քարով կամ աղիւսով,
և վրայէն կը ծեփեն կաղջինով (չիմէնթօ):
Յատակէն 20 հար. մէդր վեր կը գտնուի
նաե ուրիշ ծակոտիէն կեղծ յատակ մը, իսկ
բուն յատակին մէկ կողմը յատկապէս սար-
քուած է խփող մը (սուբաբ=գափաք), որ
կարասը կը հաղորդակցէ անմիջապէս իր տակը
գտնուած տեսակ մը ջրամբարի հետ, նոյն-
պէս աղիւսէ շինուած և կաղջինով ծեփուած:
Այս ջրամբարին մէջ հաստատուած է պարզ
ջրհան մը (թուլումպա): Իսկ կարասին վրայ
կը ծածկեն շարժուն մաղ մը քառանկիւնա-
ձև՝ վրան կախարիչով մը. մաղող մասը շին-
ուած է բարակ ծակերով մետաղոտայնէ (թել
քափէս): Առաստաղէն կախուած ճախարակ
մը կայ, որ կը ծառայէ բամպակի թեկերը
կարասին մէջ իջեցնելու, եթէ այդ թեկերը
կարծի (չիլէ) վերածուած չեն. այդ ճախա-
րակը այնպիսի գրութեամբ շինուած է որ
թեկերը կը չարէ իրարու քով և իրարու վը-
րայ կարգաւ, ինչպէս կ'ընէ կարի մեքենայի
ճախարակներուն վրայ թել փաթտող գործին :

Գլորաջուրը կամ թթւումացումը կը լե-
ցնեն տակի ջրամբարին մէջ, որու բերանը
ծածկուած է կախարիչով մը, և երբ վերի
կարասը թելով լեցուի (բերնէն 25—30 հար.
մէթր վար), այն ատեն ջրհանը կը բանեցնեն,
որ ջրամբարին մէջ գտնուած հեղուկը վեր
առնելով մաղին մէջ կը հոսեցնէ, ուրիշ
անձրևի պէս մաղուելով թեկերուն վրայ կ'իջ-
նէ, և խփողէն անցնելով, կ'իջնէ ջրամբա-
րին մէջ, ուրիշ կրկին ջրհանը վեր առնելով
կը տարածէ թեկերուն վրայ, և այսպէս շա-
րունակարար :

Մենք կը փափաքէինք այս գործիքներու
և մեքենաներու պատկերներն ալ դնելով,
կենդանի բացատրութիւն մը տուած ըլլալ.
բայց դժբաղդաբար ժողովուրդէն պէտք ե-

ղած քաջակերութիւնը չի գտնելնու համար, մեր պիւտճէին վրայ այդ ծախքերը չենք կրնար բեռնել:

Սպիտակացում՝ բամպակեայ պատառներու (խասա)

Պատառներու սպիտակացումը կը տարբերի իրենց տապալայ գործածման նպատակին համաձայն. զոր օրինակ, իբր տալածոյ թրքական կարմիր և կամ բուն խի իբր պատառ գործածուելու սահմանուած ատեն, տարբեր եղանակներով կը ճերմկցեն:

Սպիտակացում տալածոյ պատառներու — բուն գործողութեան սկսելէ առաջ, պատառները (թօփ) կը չափեն, կը զննեն և կը տառանջեն (մարքա դնել):

Պատառները սրաշեղ չափով մը իրարու վրայ կը ծալեն, և ծալքերը հաշուելով, երկայնութեան չափը կը գտնեն. այս գործողութիւնը կը կատարեն ընդհանրապէս գործիքի մը վրայ, որ կը բաղկանայ զոյգ մը զուգահեռադիր (դէմ դիմաց դրուած) փայտէ գլաններէ, որոնք կը չարժին ատամնայեռ անիւներու միջոցով:

Զննութիւնը կը կատարեն պատառները մէկիկ մէկիկ գետնէն 2 մէդր վեր հաստատուած գլանի մը վրայ փաթակելով, որ գործաւորը առաջքը կայնած, միշտ պատառը դէպ իրին կը քաշէ լաւ տեսելու համար որ, և և է պակասութիւն մը, պատառածք մը և կամ տնտերելի աղտ մը չունենայ, և ուր որ այդպիսի պակասութիւն մը նշմարէ, այն տեղի եզերքը անմիջապէս առատան (սիճիմ) մը կը կապէ:

Սպիտակացուցման գործողութիւնները տաւարտելէ վերջ, պատառները իրարու հետ չի շիթելու համար, իւրաքանչիւրին գլխածայրը կը տառանջեն. այս առթիւ կը գործածեն ընդհանրապէս բեռեկինի խիւթեան մէջ լուծուած խայծղան (թիրէ մէջնի լուհի կամ նէֆթ եալի մէջ հալած գաթրան):

Տառանջելէն վերջ պատառները ծայր ընդ ծայրի իրար կը կարեն մեքենայով, և կ'անցնին նախապատրաստական գործողութիւններու:

Սանճում. — Այս գործողութիւնով սրա-

տառներու երեսը գտնուած աղբամաղերը, իրթած թելերը և կապերը կը խանձեն, որոնք տալածոներու գեղադոյն երեւոյթին արգելք կ'ըլլան: Այս գործողութիւնը կը կատարեն, տաքութեամբ կարմրեցած պղնձե տախտակի կամ գլանի մը վրայէն արագութեամբ անցնելով պատառները իրենց աւերով լայնութեամբ: Գործողութիւնը կանոնաւոր և արագ ըլլալու համար, մասնաւոր մեքենաներ հնարած են այս մասին: Փոքր ներկատառներու մէջ կը գործածեն դէմ առ դէմ հաստատուած զոյգ մը կրկնադիր (իրարու վրայ դրուած) գլաններ, որոց մէջէն կ'անցնի արագութեամբ պատառը, և անմիջապէս իր տակը կը գտնուի տաքցած պղնձե տախտակը:

Շար.

Ղ. ԲՈՂԱՏ

ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՐԱՐՆԵՐ

ՀԱՐՅՈՒՄ ԹԻԻ 87

Իդմիրէն Մ. Ն. Միքայէլեան էֆ. կը գրէ մեղ թէ՛ այս տարի աղբ քիչ ունենալուն, կը փափաքի իր այգիները և ճիթատանները քիմիական պարարտանքով (Անկրէ շիմիք) աղբել, և այս մասին մեր կարծիքը հարցնելով, կ'ուզէ հասկնալ թէ՛ ո՞ր տեսակ պարարտանքն են որ կը գործածուին այդ ծառերուն համար:

Գործածութեան եղանակը. — Քիմիական պարարտանքներու կիրարկումը արտակարգ նախազգուշութիւններ կը պահանջէ. իրենց զօրութեան ճշգրիտ արդիւնքը այն ատեն միայն կուտան, երբ կը գտնուին այն անձանց ձեռքը, որ գիտեն գործածել:

Նախ և առաջ, կարելի եղածին չափ ամեն կողմ հաւասար կերպով տարածելու է, և վերջի հերկին անմիջապէս յետոյ: Տարածելէն վերջը պէտք է մանկեռով (թըրմըզ = herse) հողին խառնել:

Ամենէն յարմարագոյն ժամանակն է, մի-

գտնած և հանգարտ օդ մը. երբ ուժգին հով մը կը փչէ, պէտք է առժամապէս տա-
րածումը դադարեցնել, որովհետեւ ինչպէս
յայտնի է, պարարտանիւթերու մեծ մասը
հովը կ'առնէ կը տանի:

Երբ քիմիական պարարտանիւթերը ձեռ-
քով տարածուին, լաւ կ'ըլլայ, եթէ իր չա-
փով չոր և բարակ հողի հետ խառնուին:

Այգիներու և պտղատու ծառերու հա-
մար տարբեր կերպով կը կիրարկուին քիմիա-
կան պարարտանիւթերը:

30 հար.մէթր լայնութեան մը վրայ և,
որթատունկերու բունէն 20 հար.մէթր, հե-
ռաւորութեամբ, — իւրաքանչիւր կողմէն, —
պարարտանիւթերու սրոյեալ քանակութեան
կէսը կը տարածեն, և բահով խորունկ հեր-
կելով կը թաղեն. պարարտանիւթերու մնա-
ցած կէսը կը տարածեն կրկին այդ հերկուած
մասերուն վրայ:

Փոխանակ բահի, կրնաք նաեւ գործածել
որոր. այս պարագային կը չարժին հետեւեալ
կերպով:

Որթատունկերու բունէն միշտ 20 հար.
մէթր հեռու, իւրաքանչիւր կողմէն խորամ-
ներ կը բռնան, 30 հար.մէթր խորութեամբ
պարարտանիւթերու կէսը կը տարածեն այդ
խորամներու յատակը, կը ծածկեն հողով,
կրկին հերկելով, և նախորդին պէս պարար-
տանիւթերու մնացեալ մասը կը տարածեն
հերկուած մասին վրայ:

Այսպէս կ'ընեն նաեւ բոլոր միւս ծառերու
համար ալ, որ մէկ կարգի վրայ տնկուած
են:

Իսկ եթէ մ.կ կարգի վրայ տնկուած չեն,
այն ատեն չուրջտնակի՝ 30 հար.մէթր տա-
րածութեան մը վրայ կը տարածեն պարար-
տանիւթի կէսը, միշտ ծառին բունէն 20էն
30 հար.մէթր հեռաւորութեամբ, և այս
ծառին մեծութեան համեմատ, ու գործո-
ղութիւնը կը կատարեն վերը բացատրուա-
ծին պէս. այսինքն՝ կէսը առաջ և մնացեալ
կէսն ալ հերկուելէն վերջ վրան կը տարա-
ծեն:

Այգիներու և ուրիշ պտղատու ծառերու
քիմիական պարարտանիւթեր տալու յարմա-
րագոյն ժամանակն է աշունը: Երբ գարնան
մատակարարէք, այն ատեն ծառին աճումը
արտասովոր կերպով կուտարուելով, խիտ խիտ

ճիւղեր և տերեւներ կ'արձակէ, առանց պը-
տուղ տալու:

Ահաւասիկ այժմ, թէ ո՞ր տեսակ քիմիա-
կան պարարտանիւթերն են որ ընդհանրապէս
կը գործածուին այգիներու և պտղատու ծա-
ռերու:

Տեղական մէկ արտավարի (տէօնիւմ =
1000 քառակուսի մէթր տարածութեամբ,
կամ 1600 քառակուսի կանգուն, որու իւ-
րաքանչիւր կողմը կըլլայ 40 կանգուն) հա-
մար 150 քիլոի հաշւով՝

Կիրի լուսածնատ (ֆոսֆատ տը շօ)	60 քիլօ
Կալիի անկենդանատ (ազօթատ տը	
բօթաս = կիւվերչիլէ)	50 »
Կիրի ծծմբատ (սիւլֆատ տը շօ = գած	
= ալչը)	40 »
	150

Մէկ արտավարի մէջ քանի ծառ որ ունիք
տնկուած, պէտք է բաժնել այդ քանակը
իւրաքանչիւրին համեմատական հաւասարու-
թեամբ: Եթէ ծառերուն մէջ խոշորներ գլու-
նուին, պէտք է անոնց քիչ մ'աւելի բաժնի
հանել:

Ահաւասիկ ուրիշ պարարտանիւթի տարազ
մ'ալ, որ աւելի կը յարմարի գոհացուցիչ ար-
դիւնք չի տուող այգիներու և պտղատու ծա-
ռերու:

Կիրի լուսածնատ	40 քիլօ
Կալիի անկենդանատ	20 »
Նատրի » (ազօթալ տը	
սուտ)	30 »
Կիրի ծծմբատ	30 »
Գունար	
	120

Եթէ կ'ուզէք արտասովոր կերպով հասոյ-
թը չառնել, կրնաք հետագայ տարազը գոր-
ծածել, բայց այս պարագային՝ պէտք է գիտ-
նաք ձեր հողին պարարտութեան աստի-
ճանը, որպէս զի՝ չարագանցութեան մէջ
խնայով, ձեր սպասածին հակառակ արդիւնքը
չստանաք:

Կիրի լուսածնատ	60 քիլօ
Կալիի անկենդանատ	40 »
Նատրի »	30 »
Կիրի ծծմբատ	30 »
Գունար	160

Հիմա քանի որ կ'ընէք թէ, այս տարի քիչ աղբ ունիք, և կ'ուզէք մասամբ ագարակի աղբի պակասը քիմիական պարարտներով հաւասարակընել, կրնաք իւրաքանչիւր ծառի համար, ձեր դնելիք աղբէն զատ, որու քանակութիւնը չէք զուրցած, բայց ենթադրենք որ սովորական տարիներու մէջ գնելիք աղբերնուդ կէսը պիտի կրնաք տալ, ուստի՝ իւրաքանչիւր ծառի համար կրնաք աւելցնել նաեւ՝

կիրի լուսածնատ	1ուկէս քիւօ
կալի անկենդանատ	1 »
կիրի ծծմբատ	0,500 »

Նախ աղբը կը թաղէք հողին տակը, յետոյ քիմիական վերոյիշեալ պարարտները իրար խառնելով կը տարածէք մշակուած արախի վրայ՝ ծառերուն բոլորտիքը շարժանակի, վերջը բացատրուածին պէս:

Ղ. ԲՈՂԱՏ

ԹԵՐԹՈՆ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿ»Ի

(7)

ԺԻՒՆ ԱԼԵՐՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

Բայց ի՞նչ ապշութիւն, ի՞նչ արհուլիրք պատեց զիս: Յեղակարծ հարուածէ մը վարնուածի պէս կանգ առի: Ինչ որ կարգացի, կատարուած եղելութիւն մըն էր. մարդ մը մինչև հոն երթալու յանդգնութիւնն ունեցած էր:

«Աստուած իմ, գոչեցի վեր ցատկելով, բայց ո՛չ, ո՛չ, մօրեղբայրս պէտք չէ գիտնայ ասիկա: Նմանօրինակ ուղեորութեան մը վերահասու ըլլալն էր պակաս: Այն ատեն պիտի ուզէ ինքն ալ վայելել այդ ուղեորութիւնը: Ո՛չ մէկ բան պիտի կրնայ կասեցնել զինքը: Այնքան խիզախ երկրաբան մը: Հակառակ ամէն արգելքի, պիտի փորձէ՝ այդ ուղեորութիւնը կատարել: Իր հետ զիս ալ պիտի տանի եւ ա՛յլ չպիտի դառնանք: Երբեք, երբեք:»

Աննկարագրելի գերագոյգուման մը մէջ կը գտնուէի:

Ո՛չ, ո՛չ, այդ բանը չպիտի ըլլայ, ըսի բռն թափով, և քանի որ իմ ձեռքս է նմանօրինակ գաղափարի մը մօրեղբայրս վերահասու չընել, բան մը չպիտի ըսեմ անոր այս մասին: Բայց՝ ասդին դարձնելով անդին՝ դարձնելով վերջապէս գիպուածով այդ ծածկագրին բանալին պիտի գտնէ: Նախ ջնջենք վաւերագիրը:»

Վառարանին մէջ քիչ մը կրակ մնացած էր: Ո՛չ միայն թուղթին կտորը, այլև Սաքնիւտէմի մագաղաթը ածուխներուն վրայ՝ ետեւում կը պատրաստուէի, ոչնչացնելու համար այս վառնագաւոր գաղտնիքը, և ահա՛ աշխատութեան սենեակին դուռը բացուեցաւ ու մօրեղբայրս ներս մտաւ:

Ե

Հազիւ հազ ատեն ունեցած էի սեղանին վրայ դնելու վաւերագիրը:

Բրօֆէտէօր Լիաճնայրօք խորապէս մտախոհ կ'երեւար: Իր մոգին տիրապետող մտածումը վայրկեան մը դուռ ու դադար չէր տար իրեն. իր շրջագոյութեան ատեն իրենդիրը հետաքոտած ու վերլուծած՝ և իր երևակայութեան բոլոր միջոցները գործադրած ըլլալով տուն դարձած էր, նոր գուգագրութիւն մը կիրարկելու:

Արդարեւ իր թիկնաթուին մէջ նստաւ ու գրիչը ձեռքը՝ սկսաւ տարազներ ձևագրել, որոնք գրահաշուական հաշուի մը կը նմանէին:

Իր սարսաղին ձեռքը կը դիտէի ու իր չարժուամներէն և ո՛չ մին կը կրօնցնէի: Արդեօք անյուսով արդիւնք մը երևան պիտի գար. մէկէն ի մէկ ու առանց պատճառի կը սարսաղայի, քանի որ ճշմարիտ և միակ գաղտնիքը գտնուած էր և ուրիշ ո՛րէն է հետաքոտութիւն ի հարկէ անօգուտ էր:

Երեք երկար ժամեր՝ մօրեղբայրս աշխատեցաւ անխօսուկ, առանց գլուխը վեր վերցնելու, ջնջելով, գրելով, աւրելով, նորէն սկսելով հագարեւորդ անգամ:

Գիտէի որ, եթէ երբեք կարենար չարել այդ գիրքը ամեն կարելի եղած յարարերական գիրքերով, պարբերութիւնը գտնուած

պիտի ըլլար: Բայց նոյնպէս գիտէի թէ քսան գիր միայն, կրնան ձեռացնել երկու հնգիւիոն, չորս հարիւր երեսուն երկու քառիւիոն, ինը հարիւր երկու եռիւիոն, ութը երկիւիոն, եօթանասունը վեց միլիոն, վեց հարիւր քառասուն հազար զուգադրութիւններ: Արդ այս պարբերութեան մէջ հարիւր երսուն երկու գիրեր կային, որոնք առնուազն հարիւր երսուն երկու թուանշաններէ բաղկացած թիւ մը կուտան մեզի, թիւ մը որ անկարելի է համարել ու մեր խելավատակէն ալ վեր է:

Այլ փոստէ եղայ տեսներով որ մօրեղբայրս այդ գիտազնական եղանակով կը լուծէ խնդիրը:

Սակայն ժամանակը կը սահէր. մութը կոխեց. փողոցին աղմուկները դադարեցան. մօրեղբայրս իր աշխատանքին վրայ հակած միշտ, բան մը չէր տեսներ իր շուրջը և ոչ իսկ Մարթան, որ կէս մը դուռը բացած էր: Մօրեղբայրս այս խղճամիտ սպասուհիին ձայնը անգամ չլսեց.

— Պարոնք այս իրիկուն պիտի ընթրէ՞:

Մարթա պարտաւորեցաւ առանց պատահան ընդունելու դուրս ելլել. իսկ ես քչիկ մըն ալ համբերեցի, յետոյ անյաղթելի քուն մը գալով վրաս, նստարանին մէկ ծայրը պառկեցայ. մինչ մօրեղբայրս կը հաշուէր ու կ'աւրէր միշտ:

Երբ յաջորդ օրը արթնցայ, անխոնջ տըքնողը տակաւին կ'աշխատէր: Իր կարմրցած աչքերը, տոնայն գոյնը, տենդոտ ձեւքին տակ խճճուած մազերը, իր ծիրանեգոյն խնձորակները ցոյց կուտային իր ահաւելի սոսոքային անկարելիին հետ. իր մտքի յողմութիւնները և ուղեղի տարապայման ձգտումը, երկա՛ր ժամերու միջոցին:

Շիտակը, այդ վիճակը կարեկցութիւնս չարժեց: Հակառակ այն յանգիմանութիւններունցոր շատ իրաւունք ունէի ուղղել անոր, յուզում մը ունեցայ: Խեղճ մարդը ա՛յնքան դրաւուած էր իր գաղափարով որ, ա՛լ բարկանալն իսկ կը մոռնար. իր բոլոր կենդանի ուժերը մէկ կէտի վրայ կեդրոնացած էին. և որովհետեւ այդ ուժերը իրենց սովորական ելուդիէն (exutoire) դուրս չէին ելլեր, կը վախճուէր որ այդ ձգտումը սխալ թուում մը յառաջ չի բերէ իր մէջ:

Մէկ շարժումով կրնայի թուլցնել այդ

մտնակը, որ իր գանկը կը սեղմէր, մէկ խօսքով: Սակայն ոչինչ ըրի:

Այսու հանգերձ բարի սիրտ մը ունէի: Ի՞նչու համար մնայի այսպիսի պարագայի մը մէջ: Մօրեղբայրս շահուն համար իսկ:

«Ո՛չ, ո՛չ կրկնեցի, ո՛չ, չպիտի ըսեմ: Ինքն ալ պիտի ուզէ այդ ուղեւորութիւնը կատարել. ես լաւ կը ճանչնամ մօրեղբայրս. ոչինչ պիտի կասեցնէ զինքը: Հրաբխային երեւակայութիւն մը ունի ան, և պիտի ընէ ինչ որ ուրիշ երկրարաններ չեն ըրած երբեք. իր կեանքը պիտի վտանգէ: Պիտի լռեմ, պիտի պահեմ այս գաղտնիքը, որուն գիպուածով տիրացայ. զանի երեսն բերելը կը նշանակէ բրօքէտէօր Լիտէնպորքը սպաննել: Թո՛ղ գուշակէ, եթէ կրնայ. չեմ ուզեր օրին մէկը զիս մեղադրել թէ իր կորուստին պատճառ եղայ:

Այս վճռէս յետոյ՝ թեւերս խաջածակով սպասեցի, բայց հաշուի չէի դրած միջադէպ մը որ քիչ մը յետոյ պատահեցաւ:

Երբ Մարթա շուկայ երթալու համար դուրս կ'ելլէր, փողոցին դուռը գոյ գտաւ. դռան խոշոր բանալին վերցուած էր վահանքին վրայէն: Բայց ո՞վ վերցուցած էր զայն: Անշուշտ մօրեղբայրս՝ երբ իր գահավէժ արշուէն յետոյ սուն դարձաւ:

Դիտումով էր թէ անզգուշութեամբ: Միթէ անթուութեան դառնութեամբ կենթարկել կ'ուզէր զմեզ: Այս ենթադրութիւնը քիչ մը ծայրայեղ թուեցաւ ինծի: Ի՞նչ, Մարթա և ես զո՛ս պիտի երթայինք այնպիսի կոցութեան մը, որուն դարման մը տանիլ մեր ձեռքը չէր: Կը յիշեմ որ ասկէ առաջ ալ նմանօրինակ եղելութիւն մը ահաբեկած էր մեզ:

Ստուգիւ, մէկ քանի տարի առաջ երբ մօրեղբայրս իր հանքարանական մեծ դասակարգութեան կ'աշխատէր, քառասուն ութ ժամ բան չղրաւ բերանը, ու բոլոր տներէն բերել ստիպուեցան հսկասակիլ այս գիտական ծումապահութեան: Դալով ինծի, ստամոքսի գեղձմեք կը զգայի, որոնք քիչ շատ շատակեր երկտատարդի մը համար՝ երբեք զրօսեցուցիչ չէին կրնար ըլլալ:

Շար.

Արտօնատէր Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԳԱՂ. ՀԱՅ. ԳՈՐԾՆ. ԳԻՏՈՒԹԵԱՆՑ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱՐԱՆ

Գործ՝ Հ. ՍԻՄԵՈՆ ԵՐԱՄԵԱՆԻ

Սոյն բառգիրքը կը խօսի աշխարհիկ լեզուով եւ գործնական ոճով բժշկութեան, Վիրաբուժութեան Առողջաբանութեան, ճարտարարուեստից, Բնաբանութեան, Բիւժիսի, գեղերու. Բնական պատմութեանց, Աստղաբանութեան, Երկրագործութեան և այլ գիտութեանց վրայ:

Ըստ կարելոյն ամենայն խնամք տարուած է բառերու ճշգրտութեան: Ընդարձակ բացատրութիւններ կուտայ իւրաքանչիւր նիւթի վրայ, ի բաց առեալ ամէնէն անգործածական նիւթերն. իսկ կարեւոր նիւթից վրայ և շեղով օգտակար տեղեկութիւնք անպակաս են: Այս աշխատութիւնը որպէս զի յինքնան կատարեալ ըլլայ, հեղինակը իրեն առաջնորդ բռնած է ատ մը հանրագիտական եւրոպական բառարաններ:

Գիտական բառերու մասին առաջնակարգ թիւով եղած է այս գործիս Վ. Հ. Փաջուհոյ Հանրաբնական ընտիր բառագիրքն, իսկ բուսոց մասին Վ. Հ. Ալիշանի Հայբան: Աւելորդ չէ համարուած գիմերու նաեւ մասնաճիւղերու վրայ խօսող գրքերու օգնութեան:

Հեղինակը խնամք եւրոպական ընտիր գործերէ քաղելով ամենէն գործնական և օգտակար գիտութիւններն զանոնք խմբադրած է մի հատորի մէջ՝ զարգարելով ամէն ճիւղի վերաբերեալ գեղեցիկ պատկերներով:

Սոյն գործը պիտի լրանայ 50 ութածալ թերթերու մէջ, իւրաքանչիւր թերթի երկայնութիւնն է 24 հարիւրորդամբ, լայնք 16 հրմ: Գրքին մանր և գիր-ընթեռնի:

Իւրաքանչիւր թերթի բաժանորդագինն է 20 սանթիմ, ամբողջ գիրքն 10 ֆրանք (—4 ռուբլի, 2 տուար) զոր կանխիկ ներփակեալ տոմսակա պէտք է փափաքողն յղէ առ Տեսչութիւն Վեհտիկի Մեթաբարեան Տպագրատան. ապահովագրեալ նամակաւ եթէ կ'ուզէ ընդունիլ թերթերը:

Թերթերն կը շրջանին հինգ հինգ իւրաքանչիւր անգամ: Բուսատեսիկ և Տաճկաստանի համար յայտնի է թէ լաւագոյն է յանձնարարականաւ (recom mandé) լրկել: առ այս փափաքողն պէտք է 25 սանդիմ աւելի հաշուէ, որով բաժանորդագրոյն վրայ տաւեցնէ ֆր. 2,50—(12,50 ֆր.—5 ռբլ.—4 ու կէս տոյար, վասն զի կորստեան պատասխանատու չէ Տեսչութիւնը):

Տպագրութիւնը աւարտելէ վերջ, բառագրքին գիրք պիտի բարձրանայ 15 ֆրանքի. բաց ի թղթատարի ծախուց*:

* Վերագրեալ ազդի վրայ՝ Հանրագիտակի բարձր Գործակալներու և Բաժանորդներու ուշադրութիւնը կը հրաւիրենք, և կը յանձնարարենք Վեր. Հ. Ս. Երամեանի սոյն հմտայիւր և արդիւնաշատ գործը, որ ոչ միայն ֆրանսագէտ հայերու, այլ մինչեւ իսկ ֆրանսերէն չգիտողը ամէն Հայ գրագետի, բանասերի և ընթերցատէրի համար կարեւոր է, և անոնց չափ և աւելի կրնան օգտուիլ այդ բառարանի ուղղութեանէն քան որ ամէն բառի առջեւ պիտի գտնան ընդարձակ բացատրութիւններ լուսաբանուած խնամատիւ պատկերներով:

Ծ. Խ.

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ

Կ. ՊՈԼԻՍ, ՖԻՏԻԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ

Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ, ամեն տեսակ թարմ գեղորայք. վիրաբուժական գործիներ. Անգղիական և Գաղղ. պատրաստ գեղեր, գօնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը յարմար գներով: Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Բնկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններ ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացընելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց կը զրկեն գեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

Շատեր այնպէս կը հաւատեն թէ Պոլսոյ հրապարակին վրայ ՃՇՄԱՐԻՏ և ԱՆԽԱՐԴԱԽ Մօռիւ ձկան իւղ չի գրտնւրիւր. այս կարծիքը շատ սխալ է. պէտք ունեցողները թող դիմեն Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Տեարց Դեղօրէից վաճառատունը, իրենց խանի տակ թիւ 3, ուր պիտի գտնեն ուղղակի նորվէկիայէն բերել տրուած ամենալնտիր ձկան իւղի տեսակներ: Մեծաքանակ եւ փոքրաքանակ վաճառումներ կ'ըլլան խիստ դիւրամատչելի գիններով:

ՇԵՐԱՄԻ ՍՄԵՆԱԸՆՏԻՐ ՀՈՒՆՏ

Որոնք որ կ'ուզեն շերամի ամենէն ընտիր հունտերը ունենալ, պէտք են դիմել Պրուսայի «Իբէք Խան» կոչուած մետաքսի վաճառատեղոյն՝ հնտավաճառ Գրիգոր Փամպուլքեանի, որ բասթիօրեան դրութեամբ շերամի ամենալնտիր հունտը կը պատրաստէ և կը մատակարարէ իրեն դիմողներուն, խիստ հոհացելի գիններով:



**Կ. ԵՍՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ
ԹԻՅԻ ՄԵՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ**

Ձինական, Հնդկական և Ճարոնական
ամենաընտիր տեսակէ եղող արտադրու-
թիւնները պիտի գտնէք ապահովաբար
վերոյիշեալ պատուաւոր վաճառատան
մէջ անհամեմատ աժանութեամբ:

Գաւառներու համար, յանձնարարու-
թիւնները փութով և ճշգիւ կը կատա-
րուին:

Կեդրոնատեղին է, Կ. Պոլիս, ճէլալ
Պէյ խանի տակ, թիւ 10. սոյն վաճա-
ռատան ապրանքները ժողովուրդէն դը-
նահատուած ըլլալով, շատեր անոնց
կեղծը հրապարակ հանած են, ուստի
զգուշանալու համար, վերոյիշեալ վա-
ճառանիշին տակ Կ. Եսվրուէան և Յ.
Իսագուլեան ստորագրութիւնը փնտը-
ցէք:

**ԵԹԻ ՈՏՔԻ ԿՈՇՏԵՐԻ
(ՆԱՍԸՐ) ԿԸ ՆԵՂՈՒԻՔ**

Դիմեցէք առանց երկմտելու, Գոււմ-
Գափու Ջարիֆեան դեղարանը, ուր պի-
տի ստանաք 5 դահեկանի փոխարէն,
փոքրիկ սրուակի մը մէջ, Ս. Ջարիֆ-
եան էֆ. ի հնարած «Հակակոշտային»
հեղուկը՝ բացատրութիւնով մէկտեղ:

Գաւառներէ ուղղութեամբ կը ղրկուի
թղթատարով:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ

Արեւելեան ՄԱՄՈՒԼ-29րդ Տարի, կիսամյակը, ազգային, Գրական և Քաղաքական խմբագիր-Տնօրէն
Մ. Մամուրեան: - Տարեկան կանխիկ 80 դրշ կամ 17
Փրանք, Ուսուցիչներու համար 60 դրշ կամ 13 Փրք-
Հասցէ՝ Մ. Մամուրեան, Իզմիր:

ԲԱԶՄԱՎԷՊ—57րդ տարի, ամսաթերթ, Հայ մասե-
նագրական, սոսեգարական, պատմական, քերական-
նական, աշխարհագրական, հնախօսական, և ընդ - Տա-
րեկան կանխիկ, 10 Փրանք:

Հասցէ՝ Rédaction de la Revue "Bazmavep",
St. Lazare Venise (Itali)

ՀԱՆԴԻՍ ԱՄՍՕՐԵԱՅ — 13րդ տարի, ամսաթերթ.
Հայ-գրական, յօդուածներէն զատ ճշգիւ տեղեկութիւն-
կուտայ Հայ. գրականութեան, Պատմութեան և ընդ.
նկատմամբ, ամէն ամիս նոր հրատարակութեանց վը-
րայ և ընդ - Տարեկան կանխիկ 10 Փրանք:

à la Rédaction de la Revue "Hantess",

VII¹² Mechitharistengasse 4.
Vienne (Autriche)

ՀԱՅ ՇԱՔԱՐԱՎԱՃԱՌԸ

Եթէ կուզէք պատուական, համով
հոտով և աժան «լօգում՝շէքերի» ուտել,
դիմեցէք առ Սարգիս էֆ. Ալէմեան,
Էսկի-Չապթիյէ, թիւ 57, ճիշդ Թուր-
քիա Օթէլի անկիւնը:

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Ի դիմաց ՀԱՆՐԱՅԻՏԱԿԻ կ'ստորագրէ մի
միայն Տնօրէն-Խմբագրապետ Դ. ԲՈՂԱՏ,
որու ղեկիւ պէտք է, առանց բացառութեան,
վերաբերեալ ամէն գործառնու-

در علیہ دہ بغیچہ قیوسندہ اسکی ضبط
۱۹ نومرو لی دکاندہ «مجموعۂ علوم»
سر محرری (بولاد) افندی

Դ. Բոլատ Տնօրէն-Խմբագրապետ

ՀԱՆՐԱՅԻՏԱԿԻ

19. Էսկի-Չապթիյէ, Պաղչէ-Գափու
Սթամպոլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK",
19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stemboul